

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի հունիսի 19-ին

«ԴԻԼԻՉԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Սույն օրենքը կարգավորում է «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագրի շրջանակներում ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքներ ու գույք ձեռք բերելու և ծառայությունների ստացման գործարքների գծով հարկային ~~և մաքսային~~ արտոնությունների տրամադրման և դրանց կիրառության հետ կապված հարաբերությունները:

Հոդված 3. Սույն օրենքով սահմանված հարկային ~~և մաքսային~~ արտոնությունների շրջանակը, ըստ յուրաքանչյուր կազմակերպության, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կազմակերպությունների կողմից նախապես Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացվող գործարքների ու գործառնությունների ծրագրերի հիման վրա:

Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարքների ու գործառնությունների ծրագրերը նախապես Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատելու պահանջը չի տարածվում 2013 թվականի հունվարի 1-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կատարված գործարքներին ու գործառնություններին վերաբերող ծրագրերի վրա, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացվում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո առաջին անգամ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացվող գործարքների ու գործառնությունների ծրագրերի հետ միասին:

Ծրագրի իրականացման շրջանակներում՝

1) կազմակերպությունների կողմից ապրանքների ներմուծումն ազատվում է ավելացված արժեքի հարկից ~~և մաքսատուրքից~~:

2) կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ազատվում են ավելացված արժեքի հարկից:

~~3) կազմակերպությունների գուտ շահույթը՝ մինչև հարկումը, կամ դրա այն մասը, որը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը օգտագործվում է (ներդրվում է) ծրագրի շրջանակներում, ազատվում է շահութահարկով հարկումից:~~

3) կազմակերպությունների եկամուտները շահութահարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում, կազմակերպությունների ծախսերը շահութահարկով հարկման նպատակով ծախս չեն համարվում:

4) կազմակերպությունների կողմից ոչ ռեզիդենտ կազմակերպություններին վճարվող՝ գործող օրենսդրության համաձայն, հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներն ազատվում են ոչ ռեզիդենտի շահութահարկից:

5) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանցից հող ձեռք բերելու համար վճարվող եկամուտներն ազատվում են եկամտային հարկով հարկումից:

Կազմակերպությունների կողմից ծրագրին չառնչվող գործունեություն (գործարքներ) իրականացնելու դեպքում այդ գործունեությունից շահութահարկը և գործարքներից ավելացված

արժեքի հարկը հաշվարկվում և վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

Կազմակերպությունների կողմից ծրագրին չառնչվող գործարքներ իրականացնելու դեպքում այդ գործարքների հետ կապված և սույն հոդվածի համաձայն նախկինում ավելացված արժեքի հարկից ազատված գործարքներ իրականացրած անձանց հարկային պարտավորություններն այդ մասով վերահաշվարկման ենթակա չեն:

Հոդված 4. Ծրագիրը չկատարելու դեպքում կազմակերպություններին առաջադրվում են լրացուցիչ պարտավորություններ՝ հարկային ~~և մարքային~~ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 5. Սույն օրենքով սահմանված հարկային ~~և մարքային~~ արտոնությունների կիրառության կարգը (ներառյալ արտոնությունների կիրառության համար հիմք ընդունվող գործարքների կատարումը հիմնավորող փաստաթղթերը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: